**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3**
**ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ N ՀՀԱՄ-ՀԲՄԱՇՁԲ-2025/3 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Արտաշատ <<30>> հունիսի 2026թ.

ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմը, ի դեմս ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար՝ Ա. Մկրտչյանի, որը գործում է ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝Պատվիրատու), միկողմից, <<Պրոստրոյ>> ՍՊԸ և <<Արմեն-շին>> ՍՊԸ կոնսորցիումը, ի դեմս տնօրեն Ա.Սաֆարյանի, որը գործում է կոնսորցիումի կանոնադրության հիման վրա /այսուհետև՝ Կապալառու /, մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2026 թվականի մարտի 26-ի թիվ 372-Ն որոշումը և 2025 թվականի ապրիլի 18-ին կնքված N << **ՀՀԱՄ-ՀԲՄԱՇՁԲ-2025/3**>> գնման պայմանագրիի 8.5 և 9 կետերի /այսուհետև Պայմանագիր/, կնքեցին սույն համաձայնագիրը **ՀՀԱՄ-ՀԲՄԱՇՁԲ-2025/3** /այսուհետև Հանաձայնագիր/ հետևյալի մասին:

***1. Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը***

1.1 Սույն համաձայնագրով կապալառուի կողմից կատարման ենթակա աշխատանքի ընդհանուր գինը կազմում է 1 270 100 ( մեկ միլիոն երկու հարյուր յոթանասուն հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ,ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, այդ թվում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հարկերը, պարտադիր այլ վճարները:

1.2 Պայմանագրի 9-րդ կետը՝ <Կողմերի հասցեները և բանկային վավերապայմանները>> պատվիրատուի բանկային վավերապայմանները ավելացնել՝ h/h 900411004212:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, աշխատանքների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի N1 հավելվածը հանդիսանում են սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.4 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

**8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմ | «ՊՐՈՍՏՐՈՅ» ՍՊԸ և «ԱՐՄԵՆ-ՇԻՆ» ՍՊԸ ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄ |
| ք.Արտաշատ, Օգոստոսի 23/60 | Ք.Երևան, Մոլդովական փ.շ.39/3 բն.14 |
| ՀՀ Ֆինանսների նախարարություն | <<Ամերիաբանկ>> ՓԲԸ |
| Հ/Հ՝900411004212 | Հ/Հ՝1570052731967300 |
| ՀՎՀՀ՝ 04245019 | ՀՎՀՀ ՝01064316 |
| ------------------------------ Ա. Մկրտչյան | ------------------------------Ա.Սաֆարյան |
| (ստորագրություն) Կ.Տ. | (ստորագրություն) Կ.Տ. |

Հավելված N1
<<30>> հունիսի 2026 թ.
Համաձայնագիր N3

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 99600000-2 | «Ջանգակատան ջրամբարի ոռոգման ցանցի մոտ 1 կմ երկարությամբ ջրատարի կառուցման աշխատանքների» կատարման | - | - | - | - | - | - | 1270100 | 1270100 | 1270100 | 1270100 | 1270100 | 1270100 | 1270100 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմ
ք.Արտաշատ, Օգոստոսի 23/60
ՀՀ Ֆինանսների նախարարություն
Հ/Հ՝900411004212
ՀՎՀՀ՝ 04245019

------------------------ Ա. Մկրտչյան
(ստորագրություն) Կ.Տ.

**Կ Ա Պ Ա Լ Ա Ռ Ո Ւ**

«ՊՐՈՍՏՐՈՅ» ՍՊԸ և «ԱՐՄԵՆ-ՇԻՆ» ՍՊԸ
ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄ
Ք.Երևան, Մոլդովական փ.2.39/3 բն.14
<<Ամերիաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ՝1570052731967300
ՀՎՀՀ ՝01064316

------------------------ Ա.Սաֆարյան
(ստորագրություն) Կ.Տ.